
**ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

ԹՈՓՉՅԱՆ Ա. Ս.

Մեզ հասել են «Համլետի»՝ սկզբնագրային արժեք ունեցող երեք տպագիր տարբերակ (Շեքսպիրի երկերի ձեռագրերը չեն պահպանվել): Առաջինը «քառածալ»¹ (quarto, մոտ 14 x 20 սմ կամ դրանից փոքր-ինչ ավելի/պակաս) հրատարակություն է (1603): Այն բնորոշված է իբրև «վատ» (bad) և գրականության մեջ հայտնի է որպես Quarto 1 (Q1): Երկրորդը՝ դարձյալ քառածալ (1604/5), ինչպես ենթադրվում է, հիմքում ունեցել է Շեքսպիրի ձեռագիրը: Սա համարվում է «լավ» (good) և հղվում իբրև Quarto 2 (Q2): Իսկ երրորդը՝ ընդգրկված Շեքսպիրի դրամատիկական երկերի՝ հետմահու լույս տեսած մեծադիր «երկծալ» (folio) ժողովածուում (1623), նույնպես «լավ» բնագիր է: Այն (ինչպես և ողջ ժողովածուն) հայտնի է իբրև Folio 1 (F1) կամ պարզապես՝ Folio (F): Q1-ը ծավալով գրեթե երկու անգամ փոքր է Q2-ից և դրանից քիչ ավելի պակաս՝ F-ից: «Համլետի» նոր ու նորագույն հրատարակություններն առավելապես հիմնված են Q2-ի և F-ի վրա: Սովորաբար երկուսի միաձուլմամբ պատրաստվել է համահավասար բնագիր: The Arden Shakespeare երրորդ շարքի երկհատորյակում երեք տարբերակները՝ Q1, Q2 և F, հրատարակված են առանձին²: Q1-ն առհասարակ մասնագետների կողմից քիչ ուշադրության է արժանանում՝ մեծ մասամբ օգտագործվելով միայն որոշ տարբերակներում միջև ընտրություն կատարելու, Շեքսպիրի օրոք «Համլետի» կրճատ, բեմադրված տարբերակի մասին պատկերացում կազմելու ու մի քանի բացառիկ բեմական ցուցումների համար: Այդուհանդերձ, Q1-ը և դրա հրատարակության մուծ հանգամանքները մշտապես եղել ու մնում են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում:

Q1-ը՝ «Համլետ»-ի առաջին հրատարակությունը, պահպանվել է ընդամենը երկու օրինակով: Առաջինը, որի վերջին թերթը կորած է, հայտնաբերվել է 1823 թ. և այսօր պահվում է Կալիֆոռնիայի Ման Մարինո քաղաքի «Հանթինգթոն» գրադարանում (Huntington Library): Հետաքրքիր է, որ երկրորդն էլ տիտղոսաթերթ չունի (այսպիսով երկու օրինակներն իրար լրացնում են): Այն գտնվել է 1856 թ. և անցել շեքսպիրագետ Ջեյմս Օրչարդ Հալիվել-Ֆիլիպսի (1820-1899 թթ.) ձեռքը, որն էլ 1858 թ. գիրքը վաճառել է Բրիտանական թանգարանին (այժմ Q1-ի սույն օրինակն այնտեղ է): Ի դեպ, այս երկելի բանասերը, որը գրել է Շեքսպիրի կենսագրությունը, լույս ընծայել նրա

¹ Մեկ մեծ թերթը ծավալում էր երկու անգամ, և ստացվում էր 4 թերթ (8 էջ):

² Տե՛ս Hamlet, ed. Ann Thompson and Neil Taylor, *The Arden Shakespeare (Third Series)*, 2006. Hamlet: the Texts of 1603 and 1623, ed. Ann Thompson and Neil Taylor, *The Arden Shakespeare (Third Series)*, 2006.

հետ կապված կարևոր փաստաթղթեր և հրատարակության պատրաստել Շեքսպիրի երկերը տասնհինգ հատորով³, պատանի հասակում մեղադրվել է Քեմբրիջի համալսարանից հազվագյուտ գրքեր ու ձեռագրեր գողանալու մեջ: Հետագայում կասկած է եղել, թե նա Չ1-ի հիշյալ օրինակը ձեռք է բերել նույն եղանակով, իսկ ապա «խեղել» (ինչի հետևանքով գիրքը տիտղոսաթերթ չունի)⁴:

Առաջին կամ վերջին թերթի բացակայությունը Չ1-ի երկու օրինակների միակ տարբերությունը չէ: Շեքսպիրի օրոք ընդունված էր սպագրության ընթացքում նկատված սխալներն ուղղել, բայց պահել նաև չուղղված թերթերը՝ խնայելով թանկ թուղթը (յուրաքանչյուր թերթ որոշ տպաքանակից հետո կարող էր կրկին ստուգվել): Այնպես որ, նույն էջը հաճախ մի օրինակում ուղղված է, իսկ մեկ ուրիշում՝ ոչ⁵: Բրիտանական թանգարանի օրինակում, բացառապես ողբերգության սկզբի երկու տեսարանում, կան մոտ մեկ տասնյակ ուղղումներ (ոչ էական, հիմնականում՝ կետադրական նշանների ու տառասխալների⁶), որոնք արված չեն մյուս օրինակում: Իսկ բազում ուրիշ վրիպակներ ու սխալներ մնացել են անփոփոխ:

Ըստ Չ1-ի՝ երկի վերնագիրն է «Դանիայի արքայազն Համլետի ողբերգական պատմությունը» (հին ուղղագրությամբ՝ *The Tragical History of Hamlet Prince of Denmarke*), հեղինակի անունը՝ գծիկով. William Shakespeare: Նշված է նաև, որ այն տպագրվել է Լոնդոնում, Նիքոլաս Լինգի (Nicholas Ling) ու Ջոն Թրանդլի (Trundle/Trundell) համար (At London printed for N. L. and John Trundell)⁷: Տպագրիչն էր, ինչպես մասնագետները եզրակացրել են բնագրին նախորդող գլխագարդի հիման վրա, Վալենթայն Սիմմեր (Valentine Simmes): Այսինքն՝ տպագրիչ Ջեյմս Ռոբերտսը, որը 1602 թ. հուլիսի 26-ին հրատարակչական մատյանում տպագրական իր իրավունքն արձանագրելու համար գրանցել էր «Գիրք, որ կոչվում է «Դանիայի արքայազն Համլետի վրեժը»», Չ1-ում չի հիշատակվում: Ինչո՞ւ: Տարբեր հետևություններ կարելի է անել. կա՛մ սա հրատարակչական

³ *The Works of William Shakespeare*, ed. James O. Halliwell-Phillipps, 15 vols., London, 1853-1865.

⁴ Տե՛ս **Arthur and Janet Ing Freeman**, *Did Halliwell Steal and Mutilate the First Quarto of Hamlet?*, *The Library*, 7th series, 2.4 (2001), p. 349-363, որտեղ հերքվում է այդ կասկածը:

⁵ Շեքսպիրի ժամանակվա տպագրության մասին տե՛ս **Peter Blayney**, *The Publication of Playbooks*. in *A New History of Early English Drama*, ed. John D. Cox and David Scott Kastan, N. Y., 1997, p. 383-422.

⁶ Այդ ուղղումների ցանկը տե՛ս *Hamlet*, ed. Ann Thompson and Neil Taylor, p. 523.

⁷ Մրանք գրքի հրատարակիչներն են. հրատարակիչը գնում էր ձեռագիրը, ստանում այն լույս ընծայելու իրավունք, վճարում տպագրիչին (տպարանի տիրոջը) տպագրության համար և ապա տնօրինում ողջ տպաքանակը (սովորաբար գիրքը վաճառվում էր նրա սեփական խանութում). հմմտ. *The Oxford Companion to Shakespeare*, ed. Michael Dobson & Stanley Wells, reprinted with corrections, Oxford, 2008 (first published 2001), p. 353: Այն, որ Լինգի անվան միայն սկզբնատառերն են գրված, իսկ մյուս հրատարակիչ՝ Ջոն Թրանդլի անունը լրիվ է, թերևս նշանակում է, որ վերջինս արել էր ծախսի հիմնական մասը: Գրքերի վրա հաճախ սկզբնատառերով նշվում էր տպագրիչի անունը՝ ի տարբերություն հրատարակիչի:

իրավունքի խախտում է՝ գրահեռություն, կա մ էլ գիրքը տպվել է Ռոբերտսի գիտությամբ ու նրա հետ մասնավոր համաձայնությամբ: Երկրորդ հետևությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ հրատարակիչ Լինգն ու տպագրիչ Ռոբերտսը երկար տարիներ գործակիցներ են եղել: Միգուցե տվյալ դեպքում նրանք ուզում էին նախ շահույթ ունենալ Q1-ի վաճառքից, իսկ հետո, տպագրելով «լավ» Q2-ն ու այդպիսով արժեզրկելով նախորդ հրատարակությունը, ստանալ շահույթի երկրորդ բաժինը⁸: Չէ՞ որ նրանք հետագայում միասին են հրատարակել «Համլետ»-ի Q2 «լավ» բնագիրը: Նշվում է նաև, թե 1603 թվականը Ռոբերտսի համար խիստ ծանրաբեռնված տարի էր, և նա երևի ուրախ էր, որ տպագրության գործն իր փոխարեն մի ուրիշն էր հանձն առել⁹: Ինչպես էլ Q1-ից Ռոբերտսի անվան բացակայությունը մեկնաբանենք, թվում է՝ հստակ է մի բան. սա հեղինակային հրատարակություն չէ, հիմքում չի ունեցել Շեքսպիրի որևէ ձեռագիր, և չի արտոնել նրա թատերախումբը: Այս մասին պարզաբանում տալուց առաջ ավելացնենք, որ Q1-ը հավանաբար լույս է տեսել 1603 թ. մայիսի 19-ից հետո (այդ օրվանից ի վեր Շեքսպիրի թատերախումբը կոչվում էր «Թագավորի մարդիկ»): Որովհետև տիտղոսաթերթին գրված է, թե պիեսը քանիցս բեմադրել են «նորին մեծության ծառաները» (his Highnesse seruants): Այդ «ծառաներից» մեկն էր Շեքսպիրը՝ թատերախմբի դերասան, դրամատուրգ ու բաժնետեր:

Իսկ ի՞նչ բնագիր է Q1-ը՝ բաղկացած ընդամենը 2154 տողից¹⁰: XIX դ. գերիշխել է այն կարծիքը, թե սա «Համլետի» մի նախնական տարբերակ է (first draft)¹¹, որը Շեքսպիրը հետո վերամշակել է ու լրացրել: Բայց Q1-ն այնքան անկատար է և գեղարվեստական արժեքով Q2-ից այնքան ցածր, որ հազիվ թե ինչ վիճակով որ տպված է, լինի Շեքսպիրի գրչի արգասիք: Քիչ հետո դա ցույց տալու համար օրինակներ կրերենք, իսկ մինչ այդ կարևոր է հաշվի առնել նաև հետևյալը: Շեքսպիրը «մի շնչով» ստեղծագործող հեղինակ էր¹², և եթե անգամ նա իր նախկին գրածները խմբագրել ու վերափոխել է, ապա ոչ անճանաչելիորեն, ինչպես դա «Համլետ» Q1-ի ու Q2-ի դեպքում է: Նրա երկերի

⁸ Հմտ. **Gerald D. Johnson**. *Nicholas Ling, Publisher 1580-1607, Studies in Bibliography* 38 (1985), p. 203-214.

⁹ **David Scott Kastan**. *Shakespeare and the Book*, Cambridge, 2001, p. 27-30.

¹⁰ Տե՛ս **Alfred Hart**. *Shakespeare and the Homilies, and Other Pieces of Research into the Elizabethan Drama*, Melbourne, 1934, p. 124-125.

¹¹ Արդեն 1843 թ., սակայն, հայտնվել է այն տեսակետը, թե Q1-ն իրականում բեմադրությունից արված նախագրություն է. *The Works of William Shakspeare: The Text ... with the Various Readings, Notes, a Life of the Poet, and a History of the Early English Stage*, ed. John Payne Collier, 8 vols., London, 1842-1844, vol. VII, p. 191-192.

¹² Հմտ. *Hamlet*, ed. Harold Jenkins, *The Arden Shakespeare (Second Series)*, 2001 (first published 1982), p. 5, 19.

հեղինակային տարբերակներում կան որոշ հավելումներ, կրճատումներ ու բառերի կամ արտահայտությունների փոփոխություններ, սակայն ոչ այդ աստիճանի: Շեքսպիրի հանդեպ իր հակասական վերաբերմունքով հայտնի *Բեն Ջոնսոնը* (Ben Jonson)՝ նրա բարեկամն ու միաժամանակ մրցակիցը, իր օրագրում ասում է. «Հիշում եմ. դերասանները հաճախ էին նշում, իբր ի պատիվ Շեքսպիրի, թե նա գրելիս, ինչ էլ որ գրեր, երբեք տող չէր ջնջում: Իմ պատասխանն էր՝ երանի թե ջնջած լիներ հազար տող (would he had blotted a thousand), ինչը նրանք չարամիտ խոսք համարեցին»¹³: F-ի նախաձեռնողներ Ջոն Հեմինգը և Հենրի Կոնդելը՝ Շեքսպիրի դերասան ընկերները, գրքի «ամենատարբեր ընթերցողներին» հասցեագրված նախաբանում հայտնում են. «Նրա միտքն ու ձեռքը գնում էին միասին, և նա իր մտածածն արտահայտում էր այնքան հեշտ, որ մենք հազիվ թե նրանից ստացած լինենք որևէ ջնջում իր թղթերում (a blot in his papers)» (թերևս *Բեն Ջոնսոնը* նկատի ուներ հենց F-ի նախաբանի այս հատվածը):

Ջոնսոնը կարծում էր, ինչպես պարզ է դառնում նաև նույն աղբյուրում ու այլուր նրա արած ուրիշ ակնարկներից, թե Շեքսպիրը կարիք ուներ իր անգուսպ երևակայությունը սանձելու, գրածները վերանայելու և մտքերը հստակեցնելու¹⁴: Սա, Հեմինգի ու Կոնդելի վկայության հետ, հաստատում է բուն երկերից էլ պարզ երևացող այն փաստը, որ Շեքսպիրը երկար չէր զբաղվում իր հին գրածները բարեփոխելով¹⁵:

Չարմանալի չէ ուրեմն, որ XX դ., Շեքսպիրի ուսումնասիրության խորացմանը զուգընթաց, բանասերների կարծիքը Q1-ի՝ իբրև թե նրա գրած մի նախնական «Համլետի» մասին տրամագծորեն փոխվել է: Եվ առ այսօր քչերն են ժխտում այն տեսակետը, որ ոչ թե Q2-ն է ծագում Q1-ից, այլ, ընդհակառակը¹⁶,

¹³ **Ben Jonson.** *Timber or Discoveries Made upon Men and Matter*, ed. Felix E. Schelling, Boston, 1892, p. 23.

¹⁴ Հմմտ. **Stanley Wells.** *Shakespeare & Co.: Christopher Marlowe, Thomas Dekker, Ben Jonson, Thomas Middleton, John Fletcher and the Other Players in His Story*, Penguin Books, 2007 (first published 2006), p. 160-161.

¹⁵ Հնարավոր է, այնուամենայնիվ, որ տող անգամ չջնջելու մասին տեղեկությունը չափազանցված է: Գրականության մեջ հաճախ է օգտագործվում «Շեքսպիրի սևագիր թղթեր (foul papers)» արտահայտությունը: Այդպես էր կոչվում սևագիր այն վերջնական օրինակը (Շեքսպիրի կամ այլ հեղինակի), որից բեմադրության համար արվում էր մաքրագիր ընդօրինակություն՝ *fair copy*: Երկու արտահայտությունն էլ գտնում ենք արդեն 1613 թ. իմպրեսարիո Ֆիլիպ Հենսլոյին մի թատերագրի հղած նամակում (**Edmund K. Chambers.** *The Elizabethan Stage*, 4 vols., Oxford, 1923, vol. III, p. 194): Անհնար է ասել՝ Շեքսպիրի «սևագիր թղթերից» որում որքան ջնջումներ կային (կամ իրոք չկային՞): Երևում է, սակայն, որ դրանք դժվարընթեռնելի էին, քանզի, ասենք, «Համլետ» Q2 հրատարակությունը՝ հավանաբար ուղղակիորեն հիմնված Շեքսպիրի «սևագիր թղթերի» վրա, լի է տարատեսակ սխալներով:

¹⁶ Առանձին առարկություններ և հին տեսությունը վերակենդանացնելու փորձեր, իհարկե, եղել են. տե՛ս, օրինակ, **Urkowitz S.** «Back to basics: thinking about the *Hamlet* First Quarto (*The* Hamlet *First Published (Q1, 1603): Origins, Form, Intertextualities*», ed. Thomas Clayton, Newark (Del.), 1992, 257–291).

վերջինս է նախնական ամբողջական բնագրի՝ բեմադրության համար կրճատված ու հետո աղավաղված մի տարբերակ¹⁷:

Հեմինգն ու Կոնդելը F-ի վերոհիշյալ նախաբանում ասիտսում են, որ հեղինակը ողջ չէ և չի կարող տպագրությունից առաջ կարդալ ու ճշտել իր գրվածքները: Ուստի նրանք խնդրում են իրենց չնախանձել՝ Շեքսպիրի երկերը խնամքով ու սրտացավությամբ հավաքելու և հրատարակելու համար, նախքան ընթերցողը կխաբվի «զանազան գողացված ու կեղծ օրինակներով խեղված և այլակերպված դրանք հրապարակած վնասարար խաբեբաների խարդախություններով ու հնարքներով»: Այդ «գողացված ու կեղծ» օրինակներին 1909 թ. ընդհանուր անուն է տվել Ալֆրեդ Փոլարդը՝ գիտական շրջանառության մեջ դնելով «վատ կվարտոներ» (bad quartos) եզրը¹⁸ և դրանով բնութագրելով Շեքսպիրի որոշ գործերի՝ քառածալ ֆորմատով լույս տեսած խիստ թերի բնագրերը: Դրանց այնուհետև հաջորդել են նույն երկերի «լավ»՝ հեղինակային հրատարակություններ, և «Համլետն» այս իրողության վառ ապացույց է:

Նման «վատ» բնագրերը կոչվում են նաև «վերարտադրված» (reported): Ասենք որևէ դերասան (միգուցե դերասաններ)՝ թերևս թատերախմբից դժգոհ կամ արդեն հեռացած, հիշողությամբ վերականգնում է նախկինում իր խաղացած պիեսը¹⁹ և կամ այն վաճառում մի հրատարակչի, կամ էլ բեմադրում ուրիշ թատերախմբի հետ, Լոնդոնից դուրս: Վերարտադրողը, իհարկե, նաև կարող էր լինել ոչ թե դերասան, այլ, օրինակ, բեմադրությունների ժամանակ գրառումներ անող կամ բանավոր խոսքը մտապահող մի հանդիսատես, հնարավոր է՝ մրցակից թատերախմբի անդամ:

«Համլետի» պարագայում, սակայն, նա ամենայն հավանականությամբ դերասան է եղել: 1915 թ. առաջին անգամ հայտնվել է այն կարծիքը, թե Չ1-ը, ըստ երևույթին, Մարգելլուսի մի դերակատարի հիշողությամբ վերականգնված բնագիր է²⁰: Այդ գործող անձի խոսքերը, այլև ուրիշներինը, երբ նա բեմի վրա է, փոխանցված են առավել ճշտությամբ,

¹⁷ Այս մասին տե՛ս հատկապես Duthie.

¹⁸ Տե՛ս Alfred W. Pollard. *Shakespeare's Folios and Quartos: A Study in the Bibliography of Shakespeare's Plays, 1594-1685*, London, 1909, p. 64-80.

¹⁹ «Հիշողությամբ վերականգնման» (memorial reconstruction) այս ուշագրավ ու շատերի կողմից ընդունված տեսությունը Շեքսպիրի մի այլ երկի («Վինձորի զվարթ կանայք») կապակցությամբ զարգացրել է Վալտեր Գրեգը. *Shakespeare's Merry Wives of Windsor, 1602*, ed. Walter Wilson Greg, Oxford, 1910, p. XXIV-XLIV: Համեմատաբար վերջերս այն վերանայվել է (Laurie E. Maguire, *Shakespearean Suspect Texts: The 'Bad' Quartos and Their Contexts*, Cambridge, 1996), և թեպետ տեսությունն ինքնին չի հերքվել, կրճատվել է հիշողությամբ վերականգնված բնագրերի հավանական ցանկը («Համլետը» դուրս չի մնացել այդ ցանկից):

²⁰ Henry David Gray. *The First Quarto "Hamlet"*, *Modern Language Review* 10 (1915), p. 171-180. **Կաև ՀԺՄՈ**. *Hamlet*, ed. Harold Jenkins, p. 20-36 և *Hamlet*, ed. George R. Hibbard, *The Oxford Shakespeare*, Oxford, 2008 (first published 1987), p. 76-89.

քան ողբերգության մնացած՝ գերակշիռ մասը: Երևի սա է պատճառը, որ համեմատաբար հարազատորեն վերարտադրված է առաջին գործողությունը (դրանից հետո Մարցելլուսը հեռանում է բեմից), իսկ պիեսի շարունակությունը գնալով համառոտվում է, և բառացի կրկնությունն ավելի շատ է փոխարինվում վերապատումով: Թվում է՝ նույն դերասանը կատարել է նաև դեսպան Վոլտիմանդի ու «Գոնզագոյի սպանության» պերտնաժ Լուցիանուսի դերերը, քանզի երկուսի խոսքն էլ (II.2.60-80 և III.2.248-253) փոխանցված են գրեթե անխաթար: Այս երկրորդական դերերում թերևս խաղացել է մի վարձու դերասան²¹: Նա այնուհետև լքել է թատերախումբը՝ իր կարողության համեմատ հիշողության մեջ ամրաբերելով այն համառոտված «Համլետը», որ, ինչպես նշված է Q1-ի տիտղոսաթերթին, «նորին մեծության ծառաները քանիցս բեմադրել են (diuerse times acted) Լոնդոն քաղաքում, նաև Քեմբրիջի ու Օքսֆորդի երկու համալսարաններում և այլուր»²²:

Որպեսզի պարզ դառնա, թե ինչպես են աղճատված կարևորագույն դրվագները, մեջբերենք (մեր թարգմանությամբ²³) արքայազնի առաջին հռչակավոր մենախոսությունը՝ ըստ Q1-ի և ըստ Q2/F-ի.

Q1.

Երանի՛ իստ վշտոտ, լլկված²⁴ այս մարմինը
 Հավվեր, դառնար ոչինչ, կամ էլ տիեզերքի
 Երկնային գունդն ամենայն ինչ դարձներ քառս:
 Երկու ամսվա մեջ, Աստվա ծ իմ, – ո՛չ, ոչ երկու, –
 Դարձավ կինը իմ հորեղբոր: Չմտածեմ...
 Հո՞ րս եղբոր, ով նույնքան է հորս նման,
 Որքան որ ես՝ Հերկուլեսին:
 Երկո՛ւ ամիս, նախքան աղը ամենակեղծ
 Արցունքների զատվեր կարմրից²⁵ նրա ուռած
 Աչքերի մեջ, ամուսնացա՛վ... Աստվա՛ ծ, անբան
 Գազանն անգամ դա չէր անի

²¹ «Լորդ սենեկապետի/Թագավորի մարդիկ» սովորաբար գլխավոր դերերը հանձնարարում էին իրենց դերասաններին, որոնք նաև թատերախմբի բաժնետեր էր էին, իսկ երկրորդական կերպարների համար ժամանակավորապես վարձում էին շրջիկ դերասաններ. Thomas J. King, *The King's Men on Stage: Actors and Their Parts, 1611-1632*, in *The Elizabethan Theatre IX*, ed. G. R. Hibbard, *Port Credit, Ontario*, 1986, p. 21-40.

²² Շեքսպիրագետ Ալան Նելսոնի կարծիքով՝ Քեմբրիջում «Համլետի» բեմադրության մասին տեղեկությունը պետք է որոշ կասկածանքով վերաբերել, քանզի այնտեղի համալսարանի պահպանողական դեկավարությունը 1568 թ. ի վեր ամեն կերպ աշխատում էր արգելել ներկայացումները (Շեքսպիրի թատերախումբը, այնուամենայնիվ, առնվազն մեկ անգամ [1594/5-ին] եղել է Քեմբրիջում) (*Records of Early English Drama: Cambridge*, ed. Alan H. Nelson, 2 vols., Toronto, 1989, Vol. 2, p. 725, 984-985):

²³ «Համլետի» մեր ամբողջական թարգմանությունը տպագրության ընթացքում է:

²⁴ «Լլկված». բառացի՝ «հարձակման ենթարկված» (*sallied*): Այսպես է նաև Q2-ում՝ ի տարբերություն F-ի *solid*-ի («կարծր»):

²⁵ «Կարմրից». բառացի՝ «դրանց կարմրից» (*their flushing*), որ անիմաստ է:

Այդքան արագ: Թուլություն և, քո անունն է՝ կին:
 Օ՛հ, այնպես էր նրան փարվում, որ կարծես թե
 Ախորժակը սոսկ գրգռվեր իր տեսածից:
 Օ՛ զազրելի, դու զազրելի՛ արագություն.
 Այսպես շտապե՛լ արյունապիղծ անկողինը՝
 Նախքան մաշվեն կոշիկները,
 Որոնցով իմ մեռած հոր դին էր ուղեկցում՝
 Նիոբեի պես արցունքոտ: Ամուսնացա՛վ: Ո՛չ, սա լավ չէ
 Եվ լավ բանի չի բերելու,
 Բայց կոտորվի՛ր, սի՛րտ իմ. լեզուս պիտի զսպեմ:

Q2.

Երանի՛ թե խիստ, խի՛ստ կարծր այս մարմինը
 Հավվեր-գնար, տարբալուծվեր ու ցող դառնար,
 Եվ երանի՛ թե Հավվերժը չսահմաներ
 Օրենքն ընդդեմ անձնասպանի. Աստվա՛ծ, Աստվա՛ծ:
 Ի՛նչ ձանձրալի, դժգույն, տափակ և ունայն են
 Թվում բոլոր սովորություններն այս աշխարհի:
 Թո՛ւհ, թո՛ւհ նրա վրա. խոպան այգու պես է
 Նա սերմ տալիս, ծածկվում պարարտ և ի բնե
 Բիրտ խոտերով: Ո՛ւր ենք հասել. երկու ամիս
 Առաջ մեռավ,– ո՛չ, ոչ այդքան. երկու չկա,–
 Մի մեծ արքա, ով սրա հետ համեմատած՝
 Հիպերիոնն էր սատիրի մոտ, և այնքան էր
 Մորս սիրում, որ թույլ չէր տա՝ նրա դեմքին
 Երկնային հողմն ուժգին դիպչի: Երկի՛նք, երկի՛ր,
 Պե՛տք է հիշել. կինն այնպես էր նրան փարվում,
 Որ ասես թե ախորժակը սոսկ գրգռվեր
 Իր սննդից: Այդուհանդերձ, մե՛կ ամիս անց...
 Չմտածեմ... Թուլություն և, քո անունն է՝ կին:
 Լոկ մի ամիս, կամ էլ՝ նախքան կմաշվեին
 Կոշիկները, որոնցով խեղճ հորս դին էր
 Նա ուղեկցում՝ Նիոբեի պես արցունքոտ...
 Եվ նա՛,– Աստվա՛ծ, անբան գազանն իսկ ավելի
 Երկար կողբար,– դարձավ կինը իմ հորեղբոր,
 Հո՛րս եղբոր, ով նույնքան է հորս նման,
 Որքան որ ես՝ Հերկուլեսին: Մե՛կ ամսվա մեջ,
 Նախքան աղը ամենակեղծ արցունքների
 Զատվեր կարմրից նրա ուռած աչքերի մեջ,
 Ամուսնացավ. օ՛ զազրելի արագություն,
 Այսպես շտապե՛լ արյունապիղծ անկողինը...
 Ո՛չ, սա լավ չէ ու լավ բանի չի բերելու,
 Բայց կոտորվի՛ր, սի՛րտ իմ. լեզուս պիտի զսպեմ:

Չ1-ի տարբերակը նման է քանդված և ապա անշնորհք ձեռքով հավաքված մի խճանկարի: Առանձին հատվածներ պահպանել են իրենց նախկին տեսքը, բայց տեղաշարժերի ու կորուստների պատճառով ընդհանուր պատկերը գրկվել է ամբողջականությունից և գրոտեսկային բնույթ ստացել: Բացի նրանից, որ բացակայում է 10 տող, վերարտադրողի հիշողության կամ սղագրության մեջ ավելի կամ պակաս ճշգրտությամբ մնացած բառերը, արտահայտություններն ու նախադասություններն իրար են կցմցվել սխալ հերթականությամբ, և խախտվել են մելամաղձոտ արքայազնի մտքերի ընթացքն ու տրամաբանությունը: Իսկ այն դեպքերում, երբ Չ1-ի անհայտ հեղինակի ուշադրությունից վրիպել են որոշ բառեր կամ հատվածներ, նա դրանք լրացրել է ըստ իր համեստ ստեղծագործական ունակության: Համարյա իսպառ անհետացած 3-9-րդ տողերի փոխարեն, օրինակ, չի գտնվել ավելի հարմար ոչինչ, քան «երկնային գնդի» (արևի) ուժով ամեն բան քառս դարձնելու իդձը (և ողջ մենախոսությունն իրոք վերածվել է քառսի), կամ «Եվ նա՛, Աստվա ծ, անբան գազանն իսկ ավելի /Երկար կողբար, դարձավ կինը իմ հորեղբոր»-ի դիմաց կարդում ենք. «Աստվա ծ, անբան/ Գազանն անգամ դա չէր անի /Այդքան արագ»²⁶ անհերթությունը: Բայց հանկարծ տեսնում ենք, որ վերարտադրողը ճշտել է ժամանակային հակասությունը Համլետի խոսքում (նա ասում է, թե իր հոր մահից անցել է երկու ամիս, իսկ քիչ անց՝ մեկ ամիս, մինչդեռ Չ1-ում ստույգ կրկնվում է երկու ամիս ժամկետը): Հետաքրքիր է նաև, որ մենախոսության վերջին երկու տողը փոխանցված է նույնությամբ (թեև սխալ տողատմամբ): Երևի պատճառն այն է, որ, ըստ բեմական ցուցման, պետք է տվյալ պահին, Հորացիոյի ու Բեռնարդոյի հետ, հանդես գա Մարցելլուսը: Բեմի վրա լինելով՝ նա ավելի լավ է մտապահել իշխանի վերջին բառերը:

Նմանատիպ պատկեր կարելի է գտնել նաև Համլետի մյուս երկու հանրահայտ մենախոսություններում (II.2.544-600 և III.1.56-88), իսկ չորրորդը՝ «Ինչպե՛ս են ինձ բոլոր դեպքերն ամբաստանում» (IV.4.32-66), Չ1-ից, ինչպես որ F-ից, բացակայում է (այս և ուրիշ նմանությունների հիման վրա մասնագետները եզրակացրել են, թե Չ1-ի հիմքում եղել է F-ի մի բեմադրված տարբերակ): «Լինե՛լ, թե՛ չլինել. այո՛, բանն էլ հենց այստեղ է: /Մեռնել, քնել. ամբողջն ա՛յո է, այո՛, այո է» (To be, or not to be – ay, there’s the point. / To die, to sleep – is that all? Ay, all),– սկսում է Չ1-ի հեղինակն ու նույն ոգով շարունակում շեքսպիրյան ամենանշանավոր տողերի ավերմունքը (7.115-136)՝ ստեղծելով Համլետի մենախոսության խեղանդամ երկվորյակին: Իսկ, ասենք, մեռնող արքայազնի վերջին խոսքը՝ «Մնացյալը լռություն է», նա չի հիշել և դրա փոխարեն ավելի լավ բան չի մտածել, քան հասարակ ու անհամ «Ընդունի՛ր իմ հոգին, երկի՛նք» (Heaven, receive my soul) դարձվածը (17.111):

²⁶ «Դա չէր անի այդքան արագ». would not have made such speed.

Չ1-ին առհասարակ հատուկ են զանազան փոքր ու մեծ հատվածների բացթողումը կամ տեղաշարժը, հարասությունը, կամայական լրացումներն ու իմաստային փոփոխությունները, թյուրըմբռնումը, ամբողջ տեսարանների վերադասավորումը («Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսությունն ու դրան հաջորդող «կուսանոցի տեսարանը» տարվել են առաջ և նախորդում են «ձկնավաճառի տեսարանին» [II.2.171-219, Չ1-ում՝ 7.206-233]), սխալ տողատումը (որի հետևանքով որոշ արձակ հատվածներ տպվել են չափածոյի տեսքով), սկզբնագրի բառերի տեղը հաջող կամ անհաջող հոմանիշների օգտագործումն ու համանման հնչողությամբ, սակայն տարբեր նշանակությամբ բառերի շփոթը (վերջինիս տիպական օրինակներ են՝ impudent [«լկտի». 2.2], փոխանակ՝ impotent [«անկարող». I.2.29], որն ասվում է անկողնային հիվանդ ծերունու մասին, Plato [Պլատոն. 7.298], փոխանակ՝ Plautus [Պլավտուս. II.2.396], որը հիշատակվում է իբրև թատերգու, Guyana [կասկածելի հնչյունախումբ. 9.138], փոխանակ՝ Vienna [III.2.232], իբրև քաղաքի անուն և այլն. նման սխալների մի մասի մեղավորը, իհարկե, կարող էր գրաշարը լինել): Այս բոլորը բանավոր խոսք մտապահելու կամ սղագրելու բնորոշ նշաններ են:

Չ1-ի ամենաակնառու տարբերություններից մեկը «լավ» բնագրերից Պոլոնիոսի «Կորամբիս» (Corambis) և նրա ծառա Ռեյնալդոյի «Մոնտանո» (Montano) անուններն են: Մա հերթական գրուխկոտրուկն է եղել բանասերների համար, և սպառիչ բացատրություն այդպես էլ չի գտնվել: Եթե Չ1-ն է ծագում Չ2-ից, այլ ոչ թե հակառակը, ապա նախնական տարբերակներն են՝ Պոլոնիոս և Ռեյնալդո: Ինչո՞ւ են այդ դեպքում բեմադրված օրինակում անունները փոխվել: Ջենքինգը գրում է²⁷, թե վերարտադրողը, ինչպես երևում է, անունների թույլ հիշողություն է ունեցել: Այդ պատճառով Չ1-ում կարդում ենք Leartes, Rossencraft, Gilderstone, Voltemar, Գոնգագոն դարձել է Albertus, իսկ Ֆրանցիսկոն ու Օգրիկն անանուն են (ավելացնենք, որ անուն չունի նաև թագավորը, իսկ թագուհին դարձել է Gertred, իսկ դեսպան Կոռնելիոսը՝ Cornelia): Թեպետ դժվար է պատկերացնել, որ Պոլոնիոսի նման կարևոր կերպարի անունը կարող էր մոռացվել, ասում է Ջենքինգը, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել հետևյալը: Գործող անձինք նրան հանվանե հիշատակում են ընդամենը հինգ անգամ և բոլոր դեպքերում՝ Չ1-ում վատ հիշված հատվածներում:

Հիբբարդը նշում է²⁸, թե քանի որ պիեսը, ըստ տիտղոսաթերթի, բեմադրվել է Օքսֆորդում, թատերախմբի համար վտանգավոր կլիներ այնտեղ կողք կողքի հիշատակել Պոլոնիոսի և Ռեյնալդոյի (F-ում՝ Ռեյնոլդո) նման կերպարների

²⁷ Hamlet, ed. Harold Jenkins, p. 34-35.

²⁸ Hamlet, ed. George R. Hibbard, p. 74-75.

անունները: Դա կարող էր դիտարկվել իբրև արհամարհական (slighting) ակնարկ Օքսֆորդի համալսարանի հիմնադիր Պուլլենի (Pullen, լատիներեն՝ Polenius. մահացել է մոտ 1147 թ.) և այնտեղի քոլեջներից մեկի (Corpus Christi College) նախագահ Ջոն Ռեյնոլդսի (John Reynolds/Rainolds) հասցեին: Մա- նավանդ որ վերջինս թատրոնի ոխերիմ թշնամի էր և ոչ վաղուց (1599 թ.) այդ մասին խստորեն արտահայտվել էր: Հետևաբար անհարկի բարդությունից խուսափելու համար թատերախումբը պարզապես փոխել է Պոլոնիուսի ու Ռեյնալդոյի անունները:

Նույն՝ Կորամբիս անունը (Corambus ձևով) գտնում ենք նաև «Համլետի» մեկ այլ հանելուկային, գերմաներեն բնագրում՝ *Tragödia der Bestrafte Brudermord oder Prinz Hamlet aus Dönnemark* («Պատժված եղբայրասպանության կամ Դանիայի արքայազն Համլետի ողբերգությունը») վերնագրով, որն անգլերեն սովորաբար հղվում է իբրև *Fratricide Punished* («Եղբայրասպան/Եղբայրասպանությունը՝ պատրժված»): 1626 թ. գրանցված է Դրեզդենում Համլետի մասին մի պիեսի ներկայացում²⁹, սակայն, հնարավոր է, որ Շեքսպիրի ողբերգությունն առաջին անգամ հասել է Գերմանիա դեռևս Չ1-ի տպագրությունից առաջ³⁰: Նշված գերմաներեն տարբերակը գտնվել է 1710 թ. հոկտեմբերի 27-ով թվագրված մի ձեռագրում և լույս տեսել 1781 թ.: Ապա ձեռագիրը կորել է, և երկր մեզ է հասել այդ հրատարակության շնորհիվ³¹:

Ուշագրավ, տարօրինակ այս բնագիրը, որ ծավալով կազմում է Չ1-ի մոտ կեսը, երևում է, XVII դարի ընթացքում Գերմանիայում բեմադրվելիս զգալիորեն վերանշակվել է՝ անգամ ձեռք բերելով զավեշտա-արկածային տարրեր: Բացակայում են գրեթե բոլոր մենախոսությունները, սակայն դեպքերի զարգացումը հիմնականում նույնն է՝ որոշ նորամուծություններով: Կա, օրինակ, մի «բանդիտական» տեսարան: Թագավորը երկու ելուզակի (Banditen) կարգադրում է Համլետին տանել մի կղզի ու այնտեղ գնդակահարել (IV.1): Արքայազնը, իմանալով դա, նրանց խնդրում է կանգնել իրար դիմաց և աստճանակները պարպել, երբ ինքը ձեռքերը վեր կարկառի ու գոռա՝ «Կրակե՛ք»: Այդպես էլ լինում է, բայց կրակելու պահին Համլետը ճարպկորեն բերանքսիվայր ընկնում է գետնին, և ելուզակները կրակում ու սպանում են միմյանց:

²⁹ **Albert Cohn.** *Shakespeare in Germany in the Sixteenth and Seventeenth Centuries: An Account of English Actors in Germany and the Netherlands and of the Plays Performed by them during the Same Period,* London, 1865, p. CXV.

³⁰ Հմմտ. Hamlet, ed. Harold Jenkins, p. 112-113.

³¹ Այնուհետև, իհարկե, եղել են վերահրատարակություններ: Գերմաներեն բնագիրը, անգլերեն զուգադիր թարգմանությամբ (տե՛ս Albert Cohn, *Shakespeare in Germany in the Sixteenth and Seventeenth Centuries*, p. 237-304): Մեր ձեռքի տակ է նաև Ֆրանսիս անգլերեն թարգմանությունը (William Shakespeare, *Hamlet: The New Variorum Edition*, ed. Horace Howard Furness, 2 vols., N. Y., 2000 (first published 1877), Vol. 2, p. 121-142):

Երկը բազմաշերտ է, նմանություններ ունի թե՛ Չ1-ի, թե՛ Չ2-ի և թե՛, նույնիսկ, Համլետի մասին պատմության սկզբնաղբյուրներից մեկի՝ Ֆրանսուա դը Բելֆորեի հետ³²: Աղբյուրների այս խառնուրդը բացատրելու զանազան փորձերից հետո հարցը բաց է մնացել, և Ջենքինգը հարկադրված է եղել երևակայել, թե *Der Bestrafte Brudermord*-ը բեմական բնագիր է՝ «սկզբում ի մի բերված... տարբեր «Համլետ»-ների փորձառություն և իրենց հիշողությունն օգտագործելու պատրաստականություն ունեցող դերասանների մի բազմազան խմբի կողմից, իսկ հետագայում՝ խիստ վատթարացված»³³: Միգուցե սա է ճշմարտությունը: Մեզ տվյալ դեպքում հատկապես հետաքրքրում է կապը Չ1-ի հետ: Բացի Կորամբիս/Կորամբուս զուգահեռից, կան նաև ուրիշ նմանություններ (օրինակ՝ «կուսանոցի տեսարանը», ինչպես որ Չ1-ում, առաջ է տարված, այնպես որ շրջիկ թատերախումբը պալատ է գալիս դրանից հետո): Սա լրացուցիչ ապացույց է, որ Չ1-ն իսկապես «Համլետի» բեմադրության վերաբառնադրություն է, և որ այդ ներկայացումը, Կորամբիսով ու իր մյուս յուրահատկություններով հանդերձ, Լոնդոնից և Անգլիայի ուրիշ վայրերից հետո շարունակել է դերասանների հետ ճամփորդել (առնրվազն Գերմանիա)՝ ենթարկվելով բեմական «հարմարեցումների»:

Այսպիսով, Չ1-ը, ընդհանուր առմամբ «վատ» բնագիր լինելով, այնուամենայնիվ, անփոխարինելի է իբրև «Համլետի» առաջին բեմականացումների հայելի: Այս ծավալուն ողբերգությունը հազիվ թե XVII դարասկզբին բեմադրվեր առանց կրճատումների, իսկ թե ինչպես է այն համառոտվել, թերևս հենց Շեքսպիրի ձեռքով կամ մասնակցությամբ, որոշ պատկերացում կարող ենք ունենալ միայն Չ1-ի՝ թեկուզև աղճատ բնագրի շնորհիվ: Բացի դրանից, «վատ կվարտոն» պարունակում է հետևյալ՝ Չ2-ից ու F-ից բացակա կարեվոր (և անշուշտ ստույգ) բեմական ցուցումները: Ուրվականը Գերտրուդի առանձնասենյակում հայտնվում է (III.4.103.1) «իբր գիշերանոցով» (in his night gown), խելագարված Օֆելյան բեմ է գալիս (IV.5.20.1-2)՝ «վին նվագելով ու հերարձակ երգելով» (playing on a lute, and her hair down singing), և երբ Լաերտը ցատկում է Օֆելյայի շիրմափոսք, Համլետը (V.1.248.1) «ցատկում է Լաերտի հետևից» (leaps in after Leartes): Այս վերջին ցուցումը հաստատվում է Համլետի դերակատար, Շեքսպիրի գործընկեր Ռիչարդ Բերրիջի մահվան առիթով (1619 թ.) մի անանուն բանաստեղծի գրած եղերերգով: Երևելի դերասանին հիշելով «պատանի Համլետի», «ծեր Հիերոնիմոյի» (Թոմաս Քիդի հերոսի), Լիր արքայի և «վշտահար մավրի» (Օթելլոյի) դերերում՝ բանաստեղծն ապա ասում է. «Շատ եմ տեսել, որ նա ցատկի շիրմի մեջ» (Oft have I seen him leap into the grave)³⁴: Սա երևի վերաբերում է «Համլետի» հիշյալ դրվագին: Վերջապես Չ1-ից ենք իմանում

³² *St' u George Ian Duthie. The 'Bad' Quarto of Hamlet: A Critical Study, Cambridge, 1941, p. 200-204, 240-252, 260.*

³³ *Hamlet, ed. Harold Jenkins, p. 122.*

³⁴ *St' u Edmund K. Chambers, The Elizabethan Stage, Vol. 2, p. 309.*

(թեև նման ցուցում կա նաև F-ում), որ սուերամարտի ճակատագրական պահին (V.2.306) Համլետն ու Լատերը «բռնում են [F-ում՝ «փոխանակում են»] մեկը մյուսի սուերը» (They catch one another's rapiers): Իսկ այն հարցին, թե ինչ կերպարանք է ունեցել Շեքսպիրի գրած «Համլետը», բանասերները փորձում են պատասխանել ոչ թե Q1-ի, այլ Q2-ի ու F-ի ուսումնասիրությամբ:

О ПЕРВОМ ИЗДАНИИ “ГАМЛЕТА” ШЕКСПИРА

ТОПЧЯН А. С.

Резюме

Из трех оригинальных печатных версий “Гамлета” первая (1603), известная как Кварто 1 (Quarto 1, сокращенно Q1), считается “плохим” изданием, а две последующие, Кварто 2 (1604/5) и Фолио 1 (1623), Q2 и F (или F1), соответственно, “хорошими”. Q1, сильно сокращенный и искаженный вариант знакомого нам текста трагедии, в отличие от двух других, мало используется в изданиях (только для уточнения некоторых разночтений и для отдельных сценических ремарок, которые отсутствуют в Q2 и F) или же издается отдельно, в качестве особенного варианта пьесы. Однако этот странный текст “Гамлета”, исходя также из неясных обстоятельств его выхода в свет, сам по себе чрезвычайно интересен и всегда был и остается предметом оживленных дискуссий.

ON THE FIRST EDITION OF SHAKESPEARE'S “HAMLET”

A. TOPCHYAN

Abstract

The first of the three original printed versions of “Hamlet” (1603), known as Quarto 1 (Q1), is considered to be a “poor” edition, while the following two, Quarto 2 (1604/5) and Folio 1 (1623) – Q2 and F (or F1) respectively – are regarded as “good” texts. Q1, which is a considerably abridged and corrupt variant of the tragedy we are familiar with, unlike the other two, is rarely used in the editions of the play (only for separate stage directions missing in Q2 and F), or is published separately, as a peculiar version of the play. However, this strange text of “Hamlet,” considering the obscure circumstances of its printing, is extremely interesting in itself and, naturally, has always been an object of intense debates.